# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք,
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նիզամի, Մայաթևովա 12, Հեռ. 098 042417 , nizami.ararat@mta.gov.am

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

N 109
*01 դեկտեմբեր 2016թ.*

Կից ուղարկում ենք Արարատի մարզի Նիզամի համայնքի ավագանու թիվ 26.27.28,29. 30. 31 29 նոյեմբեր 2016թվի որոշումների կրկնօրինակները:

առ դիր 9 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 26

## ԱՎԱԳԱՆՈՒ 29 ՆՈՅԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի պահանջներով.

ավագանին որոշեց

Հաստատել 29 նոյեմբեր 2016 թվականի թիվ 11 նիստի օրակարգը

1. 2016 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
2. Համայնքապետարանի հաշվեկշռում եղած գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին.
3. 2017 թվի համայնքի տեղական տուրքեր և վճարների հաստատման մասին.
4. Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին.
5. ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին.

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐԱՄ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 27

## 2016ԹՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջով

ավագանին որոշեց

2016 թվականի բյուջեում կատարել փոփոխություն՝06.04.01 4251/արտաքին լուսավորություն/ հոդվածից պակասեցնել 370 000/ երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ և ավելացնել 10.7.1 4729 / այլնպաստներ/ հոդվածին՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ և 4726/հուղարկավորության նպաստ/ հոդվածին 120 000 / հարյուր քսան հազար / ՀՀ դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐՄԱ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 28

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԵՂԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29-րդ կետի պահանջով

Ավագանին որոշեց

Հաստատել համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները, համաձայն հավելված 1-ի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐԱՆ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29

## 2017 թվի ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական տուրքեր և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8, 10 հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18,19 կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

Հաստատել Նիզամի համայնքի 2017թ-ի տեղական տուրքերը և վճարները հետևյալ դրույքաչափերով:
1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների / հիմնական ու ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանում է հիմնական օբյեկտների համար`

ա/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -15000/ տասնհինգ հազար/ դրամ:
բ/ Սույն կետի “ ա” ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`
բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 20 000 դրամ:
բբ/501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 30 000 դրամ:
բգ/ 1001 և 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50 000դրամ:
բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 80 000դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`
գ/ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար - 3000 / երեք հազար/ :
դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 5000 / հինգհազար/:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախածով
ա/ Չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով ընդհանուր օբյեկտի մակերեսի ավելացում*կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության համար - 3000 / երեք հազար/ դրամ:
բ/Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

սնների գործառական նշանակության փոփոխության, ապա, բացի սույն կետի " ա" ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սնների գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ատրզետնյա/ շինարարություն կամ սնների գործառական նշանակության փոփոխության, ապա, սույն օրենքի իմաստով, այն սահմանվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է 3000 / երեք հազար/ դրամ:

1.2.3 կետերի սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 5000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 23000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 50000 դրամ:,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 5000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 23000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 50000 դրամ:,

5. Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 /երեքհարյուր/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

բ/ Հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200.0 / երկուհարյուրհազար /դրամ

փ/Խանութներում, կրպակներում, , հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման ծառայության օբյեկտներում վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 / երեսուն հազար/ դրամ

զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է հիմնական շինությունների ներսում

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  5000 դ.
գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7000 դ.
դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  10000.
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  15000
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  25000 դ.
ոչ հիմնական շինությունների ներսում
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  500 դրամ
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  1000 դ.
գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  2000 դ.
դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  4000 դ
ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  7000
զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար  12.000 դ.

դ/ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ.

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է`

ա/ Առևտրի օբյեկտների համար 50,0/ հիսունհազար/ դրամ:

բ/ Հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար 50,0/ հիսուն հազար/ դրամ:

գ/ Բաղնիքների / սաունաների/ համար 200,0/ երկուհարյուրհազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 1000/ հազար/ դրամ:

բ/ Թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20և ավելի ծավալային տոկոս/ գ/արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ:

դ/ այլ արտաքին գովազդի համար` 500 դրամ.

ե/ սոցիալական գովազդի համար` 0 դրամ.

զ/ համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք` տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով` 125 դրամ.

է/ Արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը` այդ գովազդի մակերեսին համապատասխան` 50 դրամ:

8. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է` 50000 դրամ:

9. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և / կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ

10 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 /հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000/ հինգհազար/ դրամ

Տեղական վճարներ.

1/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել- 5000/ հինգհազար/ դրամ:

2/ Համայնքի սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, սահմանազատում չափագրման և այլ նման աշխատանքների համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 1000 / հազար / դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար՝ մասնակիցների վճար - 1000 / հազար/դրամ:

4. Աղբահանության համար սահմանել դրույքաչափ ամսեկան մեկ անձի համար 10 դրամ/քսան/ դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՂՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐՄԱ

3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*03801617*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 14-րդ կետի պահանջով

Ավագանին որոշեց

Ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպության համայնքում գործող նախակրթարանը

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐՄԱ

3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31

## ՀՈԱԿ_Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26-րդ կետի պահանջով

Ավագանին որոշեց

Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպության « Նախադպրոցական ուսումնական հաստատություն» կանոնադրությունը, ըստ հավելված 1-ի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴՈՒՆՈՅԱՆ ՎԱՀԵ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՐՄԱ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ